

ՀՆՁՍԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ

ԵՒ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՆ

(Յօդուած առաջին.)

Շատ մեղան են թափել այն օրից, — ահա արդէն երեք տարի է — ինչ սկսվեցաւ հայկական կոտորածների եղերական շարքը: Բայց սե հեղուկի այդ հեղեղը չը կարողացաւ լուալ հայերի թանկագին կարմիր հեղեղը: Այդ արդէն մի պայծառ ապացոյց է մեղանի առարկութեան անօգտակարութեան իբրեւ միակ միջոց սուլթանի գործածած սարսափների դէմ: Մի շարք նախագծեր կազմվեցան օսմանեան պետութեան բաժանման մասին: Մեծածաւալ, փայլուն, չինական թերթերի վրայ մի քանի անգամ «բարենորոգեցին» Արէտէն, Հայաստանը և մինչև իսկ ամբողջ օսմանեան կայսրութիւնը: Անվերջ էին մեծ կոչված պետութիւնների ղեկավարներն Արդիւ Համիդին: Որքան «օտաներ...» Այս սակայն կարմիր շարքը յամառաբար շարունակում էր աւերման գործը, շարունակում էր կուտակել մինը միւսի վրայ հայ ղեկների կոյտերը, անհամար, անվախճան: Քաղաքակիրթ աշխարհը մինչև շուտան աստիճան զարմանում էր պետութիւնների անկարողութեան կամ աւելի ձեռք՝ նրանց որ և է լուրջ գործողութեան բացակայութեան վրայ՝ այդ արիւնաշատ դէպքերին վերջ տալու: Այդ անլուր դրութեան միջոցին յանկարծ պայթեց կրէտական ապստամբութիւնը, և ամբողջ աշխարհ վկայ եղաւ փոքրիկ Յունաստանի բռնած նոյնչափ ազնիւ, որչափ և վճռական ընթացքին իր արիւնակիցների վերաբերութեամբ: Այն քօղը, որը ծածկում էր, ինչպէս թիւրք կանանց դէմքերը, պետութիւնների գաղտնի ձգտումներն ու ղեկավարները, պատահեցաւ: Այն էնչ. այն, ինչ միայն մութ նախազգացումն էր եւրօպական հասարակութեան մէկ ամենազնչին մասի համար — թէ և շատ պարզ հայերին — դարձաւ մի ճշմարտութիւն ամբողջ աշխարհի աչքին. եւրօպական տէրութիւնները գործում են եղել և շարունակում են գործել յօգուտ թիւրքի: Այդ բաւական չէ: Արանք գործում են թիւրքի հետ ընդդէմ փոքր ազգերի, որոնք ձգտում են ունենալ իրանց հան-

գստութիւնը, իրանց մարդկային զարգացումը, իրանց ազատութիւնը: Այս անդիւական, ֆրանսիական, իտալական կրակը, մեծ պետութիւնների կրակը, որոնք կոչվում են քաղաքակիրթ ու քրիստոնեայ, անամօթաբար գործակցեցան մահմետական կրակի հետ, սուլթանի կրակի հետ, որը Մեծ Մարդասպանից դարձել էր հաւատարիմ դաւակից իր վեց մեծ եղբայրների ընդդէմ իր անպաշտպան քրիստոնեայ հպատակների:

Ինչո՞ւն է այդ բոլորի բանալին: Ուզում են հաւատացնել թէ օսմանեան կայսրութեան ամբողջութեան պահպանման համար է այդ: Արեւի այդ բանի հրամանը հասել է միւսին նախախնամութիւնից, որի նշովքներով — մի տարի կայ — լուրջ Սօլդերի շանթահարում էր սուլթանին և սրա կայսրութիւնը: () նշանաւոր ամբողջութիւն: Այս սակայն բաւական է միայն քիչ աչք գցեն դէպի մօտ անցեալը, քիչ իրանց վրայ նայեն, որպէսզի համոզվեն — այնպէս չէ — որ իրանցից, մեծ տէրութիւններից, իւրաքանչիւրն իր ծոցում ունի պատառներ այդ կտոր-կտոր եղած կայսրութիւնից: Այս մերթ ընդ մերթ կատարված այդ քաղաքական-վերաբուժական անդամահատութիւնը նրանք միշտ արել են յանուն... նոյն նշանաւոր ամբողջութեան: Արդեօք նոյնօրինակ մի խաղի հանդէպ չենք և հիմա: Չեն հրսկում արդեօք նրանք, այդ վեց մեծ դաւադիրները, ամեն-մէկն իր օգտին և իր ներքին դառում, այն բարեպատեհ ըօպէն, երբ կարող կը լինեն ծաղրել, մէկ արիւնաշատ եղերերգութեամբ, հէնց նոյն այդ իրանց պահպանած՝ ամբողջութիւնը: Ուրեմն էլ ինչի՞ է ծառայում նաև ոչ պակաս նշանաւոր «եւրօպական համաձայնութիւնը»: Մի քանի ժամանակ առաջ, երբ դեռ այդ համաձայնութեան կայացումը լոկ փափագ էր, ասվում էր թէ ամբողջ դժբաղդութեան պատճառն այդ համաձայնութեան բացակայութիւնն է: Այժմ փաստերն ու համաձայնած տէրութիւնների գործերն ապացուցանում են հակառակը. — իսկապէս հէնց այդ համաձայնութիւնն է ամեն դժբաղդութեան պատճառ: Աւելի ևս. այդ համաձայնութիւնը ըստեղծեց մի խիստ լարված վիճակ՝ ամենասոսկալի վտանգներով յղել: Ուրեմն օգտակարութեան պէնք լինելու փոխարէն, ինչպէս ուզում էին կարծեցնել

տալ, նա դարձել է զէնք խաբէբայութեան ու աղէտների: Որովհետեւ փոխանակ լինելու մի համաձայնութիւն, որ գործում է դրական ուղղութեամբ՝ լուծելու հրատապ խնդիրներն Արեւելքում, նա աշխատում է բացասական ուղղութեամբ: Փոխարէն վերջ տալու օսմանեան կայսրութեան մէջ եղած անիրաւութեան, անկարգութեան, բարբարոսութեան, խողիողման. փոխարէն ամբելու տանջվողների ցաւերը, օգտակար ու իրական բաւարարութիւն ու իրաւունք տալու խորապէս անարգված ու ջարդված ժողովրդների արդարացի պահանջներին ու ձգտումներին, — ուղղակի դրա հակառակն արին: Էնց նոյն այդ ժողովրդներին զոհաբերեցին իբրեւ ողջակէզ թիրաքիայում եւրօպական կապիտալներ ունեցող հարուստ անհատների Մօլօխին, նաեւ Մեծ Մարգասպանի հրապոյրներին և իրար հակառակ պետութիւնների զծուծ ու զգուշի շահերին...

Վարձեալ մէկ ուրիշ համերգ. նոյնպէս՝ իբր թէ յանուն խաղաղութեան է, որ եւրօպական տէրութիւնները համաձայնութիւն են կայացրել: Այդ խաղաղութիւնը, որ ռաբակոծում է Արեւելք, որ զօրացնում է թրքական ցորբերը, որպէսզի սրանք աւելի ապահովութեամբ ու աւելի աջողութեամբ կոտորեն կրէտացիներին. այդ խաղաղութիւնը, որ եւրօպական պաշարումով շղթայում է Արեւելք ու Յունաստանը, կապկապելով այս վերջին փոքրիկ տէրութեան ազատիչ ձեռքերը և, ընդհակառակը, տալիս ընդարձակ ասպարէզ ու ազատ գործողութիւն, նոյն իսկ նիւթապէս պաշտպանութիւն ու աջակցութիւն կարմիր սուլթանի քանդվող կառավարութեան, նրա աւազակախմբին... Վա, անշուշտ, այն նպատակով, որ նա կարողանայ լիովին ու ամբողջովին կատարել իր կոտորածները՝ սկսած Արարատից մինչև Արեւելք լեռները... Այդ բոլորն, արդարեւ, ներկայացնում են մի խիստ տարօրինակ, խիստ տգեղ խաղաղութիւն, և մի խաղաղութիւն՝ մշտական պատերազմում ու անվերջ կոտորածներում, մէկ արեւնալի խաղաղութիւն, որն ամեն կողմից կուտակում է ամենաճանր վտանգներ ամբողջ Աւրօպայի զլխին... Իսկ մէկ-երկու տարւայ ընթացքում մէկ-երկու հարիւր հազար հայերի եւ կրէտացիների ջարդը — խաղաղութիւն է այդ: Չէ՞ն դրանք արդեօք տեսարաններ աղէտների ու աւերների, հետեանք ասեա մի երկար պատերազմի, պատերազմ, որի վախճանն անկարելի է նախագուշակել: Եւ դեռ ի՞նչ կը լինի այդ վախճանը...

Այսպէս, պահանջելու համար ամբողջութիւնը մի կայսրութեան, որ տապալվում է և իր տակ խեղդում ամբողջ ժողովրդներ, և նոյնպէս յանուն մի խաղաղութեան, որն այդ կայսրու-

թիւնից դարձրել է մի լայնածաւալ սպանդանոց, — այդ գործի համար է, որ պետութիւններն իրար հետ համաձայնել են և դաւադրութիւն են լարում, գործելով յանցանք de lèse humanité (ընդդէմ մարդկութեան):

Իայց օսմանեան կայսրութեան ամբողջութեան պահանջման մասին եղած համերգն, ի վերջոյ, դառնում է մի տխուր ջեզուիտութիւն՝ ծնունդ տվող բոլոր աղէտների: Ամեն տարակոյսից դուրս է այն, որ այդ ամբողջութեան պահանջումն այսուհետեւ մէկ աններելի ցնորք է: Մէկ օրգանիզմ (կազմութիւն), որ այլ ևս փտած է և կարող չէ կենդանանալու, վերածնվելու, նա դատապարտված է մահան: Վարուս երկրորդ կէտում, Պարիզի Վաշնադրութիւնից ի վեր, և նոյն իսկ առաջ, մինչև ներկայ օրերը շատ ջանք է թափվել, մասնաւորապէս Մեծն Բրիտանիայի կողմից, պահանջելու օսմանեան կայսրութեան հողային ամբողջութիւնը և կամ զէթ նրան պահելու մեծ պետութիւնների շարքում: Այսօր յայտնի է, թէ ինչ արդիւնք ունեցան այդ ջանքերը: Թիրաքիան չը կարողացաւ կամ աւելի ձեռք՝ անընդունակ եղաւ օգտվելու իր բարեկամ կամ դաշնակից տէրութիւնների այդ ջանքերից, տէրութիւններ, որոնք իրական շահեր ունէին Առեւելքում՝ այնտեղ պահանջելու մի բաւական զօրաւոր թիրաքիա: Վարչական բարենորոգումների ամեն նախագիծ, մինչև անգամ յայտարարութիւնը քաղաքական սահմանադրութեան նման մի նախագիծ՝ ոչնչի չը յանգեցան, մնացին մեռած տառ: Ի՞նչ էր դրա պատճառը: Խնդիրը նրանումն է, որ սուլթանների և թիրաքիայի այլ կառավարիչների չար տրամադրութիւնն ու չար կամքը, որպէս և ամեն դաւերն, ունեցել են և ունեն իրանց հիմք, դարերի ընթացքում, մահմետական ժողովրդների քաղաքական, տնտեսական ու հասարակական կատարեալ անշարժութիւնը: Այդ հիմքը բարձրանում է այն մեռած ու ժանտահոտ ճահճի յատակից, որ, դարերից ի վեր, եղել և պահանջվել է թիրաք ժողովրդի կեանք անուան սակ: Այդ հիմքը կաղմողն են նաեւ մտաւոր կեանքի կատարեալ բացակայութիւնը, այնքան ցածր ու բարբարոսական կուտուրան: Այդպիսի մի դրութեան մէջ, երբ չէ կատարվում ոչ մի շարժում հասարակական կեանքում, թիրաքական բռնակալութեան, դեսպոտիզմի հաստատ ու մնայուն դիրքը բնական էր, և մահմետական ժողովրդները ոչ միայն չեն զգալ պահանջ որ և է բարելավման, բայց և պէտք է լինեն հեղաշրջման ամեն փոփոխութեան հասարակական կեանքի մէջ: Այսպէս, վատ կառավարելը և մէկ անխիղճ բռնութեան րէթիմը՝ նախ դառնալով մէկ ընդհանուր սովորութիւն, որն ունի իր

արմատները հասարակական կեանքում, ընդունում է և ձեռք է բերում օրէնքի ոյժ և ճակատական (fatalité) բնաւորութիւն: Ահնարեւ է, որ այդ բոլոր պայմանների ներկայութեամբ՝ ամեն բարենորոգման, ամեն փոփոխութեան դէմ թիւրքիայի Սահմանականները երեւան են գալիս իբրեւ թշնամիներ, սարսափում են ամեն նորամտութիւնից, մանաւանդ, երբ դա կատարվում է քրքիստոնեաների պահանջով ու ձեռքով, այդ անհաւատ գեավուրների ստիպողականութեան տակ: Ահա հէնց այդ կոյր դրամադրութեան մէջն է, այդ բաղմատեսակ, թէև նոյն բնութիւնն ունեցող, պայմաններումն է թաքնված այն ներքին ոյժը, որը կարողացել են շահագործել, առաւել կամ նշուաղ աջողութեամբ ու տեղողութեամբ, թիւրքիայի ամեն կառավարիչները, գահակալ կամ ոչ, և մասնաւորապէս Աբդուլ Համիդը: Այդպիսի բռնաւորութեամբ և իրերի այդ տեսակ կարգով, որոնց մէջ շրջանակված է իրանց կեանքը, ամբողջ եռանդով ու իրանց անգութ Փանատիկոսութեան ամբողջ արիւնարբութեամբ հակառակելով ու յետ հրելով ամեն քաղաքական կամ այլ նորամտութիւն, մահաբանականներն, ընդհակառակը, շատ դիւրութեամբ են զինանում ստիպման, ոյժին: Աւ Օսմանեան կառավարիչներն էլ միշտ նոյն բռնաւորութիւնն են ցոյց տվել: Մի պետութիւն, որ իր շէնքի համար իբրեւ հիմք այդպիսի պայմաններ ունի, առաջնանից դատապարտված է մահաւան: Միմիայն մէկ ընդարձակ քաղաքական կուսակցութեան կազմութիւնը մահաբանականների մէջ, մի կուսակցութիւն վճռական կերպով բարենորոգիչ-առաջադիմական ու յեղափոխական, կարող էր փրկել թիւրքիային: Բայց այդպիսի կուսակցութիւն երբէք երեւան չեկաւ և իր գործունէութեան ժամն էլ այլ ևս վաղուց անցել է:

Աւ ահա, այդ բոլոր պայմանները մի կողմից, միւս կողմից երեւակայեցէք այնպիսի ժողովրդներ, ինչպէս յոյները, կրէտացիները, մակեդոնացիները, հայերը, որոնց պահանջն է ազատվել ու առաջադիմել քաղաքական, տնտեսական ու հասարակական կեանքով, որոնք ընդունակ են մտաւոր ու բարոյական զարգացման համար, ունեն թիւրքերից շատ աւելի բարձր կուլտուրա — և միևնոյն ժամանակ ստիպված գտնվել միևնոյն թիւրքական ընդմիջ տակ՝ ճնշված, անարգված, կողոպտված, ջարդված, ունենալով իրանց զինին վայրենի արշաւողների լուծը: Այդ ժողովրդները պէտք ունեն, նրանց համար մի պատմական անհրաժեշտութիւն է՝ փրկել իրանց կեանքը, իրանց պատիւը, առաջադիմել բարոյապէս ու նիւթապէս, հետևաբար իրանց հասարակական կեանքի ամեն պայմանների ձևերի մէկ արմատական փոփոխութեան ու վե-

րանորոգման պահանջն ունենալ:

Ահա այն ծայրայեղ հակասութիւնը, այն սուր տարբերութիւնը պատմական շահերի ու ձգտումների, որ ունեն մի կողմից մահաբանականները և միւս կողմից վերոյիշած ժողովրդները, որոնք գտնվում են առաջինների լծի տակ:

Թիւրքիայում գոյութիւն ունեցող իրերի այդ պատմական կարգն է, պատմական շահերի ու ձգտումների այդ հակասութիւնն է, որ և ծնունդ տվեց Արևելեան Խնդրին դարուս հէնց սկզբից: Աւ այնքան, որքան տեղողութիւն կունենայ իրերի այդ կարգը, պատմական հակասութիւնը և այդ միջավայրը, որ հէնց սաղմի մէջ սպանում է զարգացման ամեն կարելիութիւն թիւրք լծի տակ գտնվող օտար ազգերի համար, — Արևելեան Խնդիրը կը շարունակէ գոյութիւն ունենալ իր ամբողջ զօրութեամբ: Աւ եթէ նա չը գտաւ մի շուտափոյթ ու նպատակաշարժար լուծում թիւրքաց բռնութեան տակ հեծող ամեն քրիստոնեայ ժողովրդների համար, նա կը մնայ օդում կախ իբրեւ մշտական սպառնալիք՝ ընդհանուր եւրօպական արհաւիրքներ գուժող: Թիւրքիայում գոյութիւն ունեցող իրերի կարգն է, որ անխուսափելի է դարձնում, կարճ ժամանակամիջոցում, այդ կայսրութեան կործանումը, մի վախճան դէպքի ուր ճակատագրական կերպով, դարերի ընթացքում, նրան մղում էին այն բոլոր դէպքերը, որոնց թատրոն էր այդ երկիրը: Աւ ի վերջոյ օսմանցիները ստիպված կը լինեն — ի հարկէ միայն ոյժի տակ ճնշվելով — ձգել ու թողնել այն երկիրները, որոնք բնաւ իրանցը չեն, որոնք, իրանց տիրապետութեան մի քանի դարերի ընթացքում, նրանք, իբրեւ օտար արշաւողներ, ենթարկել են ամեն տեսակ բռնութեան, աւերել, ամայացրել են: Թիւրքիան այլ ևս մի մեռեալ է, բայց այնպիսի մի մեռեալ, որ պէտք է սպանել:

Ղարնք են իրական պայմանները և տրամաբանական ու անխուսափելի հատեանքներն Արևելեան Խնդրի, եթէ պոկենք այն փոփոխական գոյներով հարուստ թեփամուրթը, որով ծածկել են նրա երեսն իրար թշնամի պետութիւնների քաղաքականութիւններն ու հակառակ շահերը:

ՆՈՐԱԿԱՆԵՐ ԿՐԻԻԿՐԵՑԻՑ

Տան և հինգ ամիսներէ ի վեր իրենց տներու մէջ բանտարկված վիճակի մէջ գտնվող Բ ա յ ա տ ի հասարակութիւնը. 3-4 ամիս է, ինչ նարինջի գործարաններ բացվելով, փոքրիկ վարձքեր կը ստանար ժողովրդի մի մասը այդպիսով գէթ չոր ու ցամաք հացեր գնելով կապէր: Քսան օր եղաւ, որ գործադու եղան աշխատատեղերը: Խեղճ և թշուառ հայերը չը գիտեն, թէ ինչ միջոցների դիմեն սոսկ սովալուկ չը մեռնելու համար կառավարական պաշտօնեաների և

տաճիկ խուժանի ի գործ դրած հարստահարութիւնները և բարբարոսութիւնները արգելք և պատճառ կը լինին շարունակ բանտարկված դրութեան մէջ թողնելու հայերիս: Մեր ինչքերը, շարժուն հարստութիւնները կորզելուց յետոյ, անշարժներն էլ փճացնելու վրայ են... կեանքի ապահովութիւն երբէք չը կայ. վաստակի դրոներ փակված և տնտեսական վիճակը խաղաղ քայքայված է...:

1897 Յնվր. 23 Մէրսինի Անգլ. Հիւպատոս Մըսթր Մասի եկած և քննութիւն մը միայն անելով հեռացած լինելը նախապէս գրուել էր: Միաժամանակ գէպքերը անպակաս էին:

25 Յնվր. Ալէքսանտրէդ բանտարկուելով հարցաքննութեան ենթարկվեցան Պ. Յովհաննէս Գարա-Սարգիսեանը և Տ. Պողոս Բահանան. առաջինը վաճառական և երկրորդը հիւանդ բժիշկին դիմելու գնացեր էին մինչև որ իրենց օձիքը ազատեցին բաւական դրամներով ստիպուած Լքցրին թիւրքի դատարկանած քրտակները:

Խայտառակ և անամօթ տաճիկ կառավարութիւնը, չի կարենալով Անգլ. Հիւպատոսի առաջ բառ մը իռի արտասանել, նրան Ալէքսանտրէդ տանող հայ-ջորեպաններն կը հալածէ, իբր թէ անոնք լինին Հիւպատոսին գրգռող և առաջնորդողները:

Օրքերի արած սպաննութիւնները, գողութիւնները ու խեղճութիւնները հարկ չըկայ նկարագրել. տաճիկ զօրքերը տեսնող և ճանաչողները արգէն գիտեն անոնց ստորաբարձ և զազիր բնաւորութիւնները...:

Տեղային կառավարական այլ և այլ պաշտօնեաների և «պահապանի» անուն կրող զօրքերի և զօրապետների ի գործ դրած գազանային բարբարոսութիւնների. կեղեքմունքների և վայրագ խուժանի կատաղի ընթացքի մասին խիստ ազդու ոճերով գրված և զանազան տաճիկ բարձրաստիճաններին մատուցված հանրագրի վերայօք, Ատանայի կուսակալութիւնէն իբր քննիչներ ուղարկուել էին երեք անձնաւորութիւններ, մի հազարապետ, մի սէր-գօմիսէր և մի բոլիս, որոնք տեղւոյ հասան 97 փոր. 17 ին. սոյն օրը հասել էին Օսմանիայից երկու գունդ զօրքեր 200-Մարզուան. դորա իջեանելով շուկան, (Չորս-Ճամբան) շարք մը խառնութներ կան որոնք նոր էին շինուել և ուր լեցուած էին վաճառականի նարինջներ. գրէթէ բոլորի դռներն և փեղկերը կոտրելով գիշերը վառեցին և նարինջները յափշտակեցին. արդար քննիչները... նոյնանման վայրենութիւնները առ ոչինչ կը համարէին անցեալ և ներկայ կանխագծված բարբարոսութիւնների բախ գաւառները...

Յիշեալ քննիչները, տեղային կղերական և աղադասակարգը խուցի մը մէջ ժողովելով քաղցրութեամբ կը վարուեն անոնց հետ և կաշխատին հերքել նոյն հանրագրի պարունակութիւնը և վերագրել այդ անհատի մը: Բայց հայերը համարձակօրէն պնդեցին, որ «մենք գրեցինք և կնքեցինք, և դեռ նուազականը գրել ենք, պէտք է մեր իրաւունքը պաշտպանուէ և մեր քննութիւնները պէտք է լինին կանոնաւոր. և պաշտօնական»: Այս յանդուգն պատասխանին «սատկած դիակի» հաւատարիմ «շնիկ»ները կը քծնին և ոտնալէզ կը լինին, որպէսզի անցեալ գէպքերը մոռանան, անոնց մասին չը գանգատուեն... Հայերը մի առ մի կը ներկայացնեն թէ սպաննուածների վերաւորութեան թաւանութեան ու հրկիզութեան պատմութիւնը և կը պա-

հանջեն ոճրագործների պատժական դատարանի ենթութիւնը: Թիրքերը կը պատասխանեն թէ դուք ալ «վաթսունից աւելի» մահմետականներ սպաննեցիք միանգամայն, ուրեմն մենք ալ այդ պէտք է յիշենք, դուք այդ տեսակ ոչինչ բաներին մի հետեւիք... և այժմ, դիտէք, մեր գթառաս սուլթանը այդ բոլորին ներեց, միայն այն ասացէք, որ երէկ և այսօր ինչ է պատահել... Հայերը չեն ընդունել...

Բօլիս Հայրին դուրս ելնալով հայերէն մի քանի ժին փախալով կասէ «այդ հանրագրի իւրաքանչիւր կէտերին քննել և գննել անկարելի է, միայն գայ մագամին և այլ պաշտօնեային կը փոխեն և դուք հանգիստ կը լինիք, թերեւ ձեր գայմագամը ես կամ գօմիսէրը լինիք, լաւ չը լինիր: Կը պատասխանուի «մեր պահանջը պաշտօնեայի մը փոփոխութեան մէջը չէ, այլ հիմնական բարեփոխում, արդար օրէնք և անաչառ գատարան կուզենք յանցաւորն պատժող ենթարկուելու...»

Ինչքան քծնեցան, ոչ մի օգուտ չի քաղեցին, ճարահատեալ այլ միջոցների դիմեցին, մի քանի կէտեր միայն հաւաքածոյ անելով կառավարական պաշտօնեաների և ոստիկանների արարքները, կնքել տուին ներկաներին. իբր թէ պիտի վաւերացնէին հանրագրի պարունակութիւնը, քննեցինք և նոյնութեամբ արդաւացի գտանք ըսուեցաւ: Երբ առաջարկուեցաւ, որ «տաճիկներէն ալ ու է մուհակ պիտի պահանջէք, որ այսուհետեւ խնդիր մը չի յարուցանեն: Կարճ պատասխան եղաւ թիրքերու կողմէ, «այդ մեր գիտնալիքն է»

«Քննիչները» տաճիկ գիւղերն ալ շրջելով հեռացան Ատանա:

Արպէս հրամանատար փաշայի շրջան կատարած տեղերէն կրակ կելներ և տաճիկներէն յայտարարութիւններ էր վերուցել թէ ի պահանջը հորդին «բոլորս ինչքով և հոգով պատրաստ ենք սուլթանին օգնել և կեաւորներին ջարդել» ի հարկ է դրանց քննութիւնը ու պտոյտը նոյնպէս միեւնոյն նպատակ ու հրահանգը կուտային մոլեռանդ և բարբարոս թիւրք խուժանին: Ճեղդ այդ «քննութեան» օրերէն սկսեալ պատրուակներ կը փնտեն հայերիս կոտորելու, զանազան խաբեքայական ստալօդ զոպարտութիւններու ու ամբաստանութիւններու կը կը գիմն որպէս զի խնդիրների ու կոտորածներու շարժառիթը հայերը ներկայացուին:

Բաժազանի պայրամէն 2-3 օր առաջ սուտ մը հնարեցին, որ «իբր թէ գիշերով Օճագլըի մզկիթի առաջ 2 200-Մարզուանցի աշգրեաններ ռուսները ձեռնին փորձ պիտի անէին մզկիթն օգը բարձրացնել և մենք խնդիրն իրազեկ լինելով» փախան և չի կարողացան իրենց նպատակին հասնիլ: Անմիջապէս, ելեթթիքի արագութեամբ տարաձայնեցին ժողովորդի ամեն խաւերին մէջ, մինչև անգամ կառավարութեան բողոքեցին: Այդ առթիւ շուկան նստող զօրքերը ետ քաշվելով, վրանների մօտ խրամներ բաց արին և տաճիկ գիւղերէն հայասէր թրքեր գալով, կը հաղորդեն հայերուն: Կառավարութիւնը կը պահանջէ հաւաքել Մուազզապ, ի հիւսիս, բէտիֆ, Մուսթահաֆը և կիւմիւշ-գուլուք զօրքերը, այսինքն. 15-էն մինչև 75 տարեկան: Թրքերը մերժեցին այդ մինչև բաժազանի երկրորդ և երրորդ օրուան այդ պահանջն է եղել պատերազմ բանալ համաձայնեալ վեց պետութեանց դէմ. նորա պատճառը՝ հայերն

են եղել ուստի, կասեն, պէտք է բաժանին 2 պայ-
րաժը մէկէն անել. առանց ատոնց կոտորելու չենք կա-
րող զինւորութեան գնալ, վստահանալով մեր կիներն
ու զաւակները ներքին թշնամիների մօտ: Քանի որ
բարեկամ ենք, կաւելացնեն հայասէր թիւրքերը, ահա
լուր կտանք անոնց չար դիտաւորութեան մասին և դուք
արթուն կացէ՛ք:

Միևնոյն իմաստով լուրեր հասան ամեն կողմերէն,
ինչպէս Ալէքսանդրէի, Այնթապի, Գերմանիի,
և Ատանայ: Ահա արաւաքը ամեն ուրեք է: Սուլ-
թանը միշտ այն սուլթանն է և խուժանը նոյնպէս. նա
քաջ էր առաջ Եւրոպայի անհամաձայնութեան շնոր-
հիւ, և քէյքին համեմատ կոտորել կուտար անգլէն և
անպաշտպան հայերը, նա շարունակ կը դիմէր աղուե-
սական խորամանկութիւնների, և ուր կը տեսնէր ինք-
նապաշտպանութեան ոգին կրող ժողովուրդ, նախ զէն-
քերը կը գրաւէր յետոյ անգթաբար կոտորել կու-
տար: Տեսնելով վեց պետութիւնների համաձայնութիւ-
նը բարենորոգմանց ծրագրի գործադրութեան ճշուժ
բանեցնելու վերաբերմամբ, սուլթանը կը զննէ առ-
երես և վերաբաւոր Օրմանեան պատրիարքին միջո-
ցով, որ կը հնազանդի իր վեհափառն իրեն «բարե-
նորոգմանց» խնդրագիր տալ կուտայ, և այդպիսով Օր-
մանեանն ահա կաշխատի Եւրոպայի ճշուժը արգիլել,
ներկայացնելով, որ, բարենորոգումը եղած է և լինե-
լու վրայ է: Թող այդպիսիները հաչեն, իրենց տեղը
արգէն, դաւաճանների գերեզմանները, վաղուց է փոր-
ված, անոնք ողջ-մեռեալներ են, և թիւրք կառավա-
րութիւնն թող աշխատի յառաջ տանել իր նպատա-
կը՝ կոտորել հայերը, հայերն ալ անցեալէն խրատվե-
լով՝ ի հարկէ պիտի դիմեն իրենց նշանաբանին «մահ
կամ ազատութիւն»: «Աղտան՝ աղ. չօգտան՝ չօգ», քի-
չէն՝ քիչ, շատէն՝ շատ. թող սուլթանը իր զօրքե-
րով, խուժանով և նշանաւոր յայտնի իր հայ-աճէնթ-
ներով ճիգ թափէ հայերը ոչնչացնել և հայերն երբ
համերաշխ ոգւով ջանանք դէպի մեր Ս. նպատակակե-
տին, բոլորն ալ չափ կը դնեն իրենց կատաղութեան,
հարկաւ...

ՆԻՉԱԿ.

ՆԱՍԱԿ ՍԱՐԱՇԻՑ

Թուրք կառավարութեան ճշուժը օրէ օր աւելի
և աւելի կը ծանրանայ մեր վրայ, մէկ կողմէ ծեծով,
անլուր հայհոյանքներով ու նախատինքներով պէտէլ-
ի էի, ճանապարհի շինութեան. և այլ տուրքերու հա-
ւաքումը. միւս կողմէ թշուառութիւնը և չքաւորու-
թիւնը անտանելի դարձուած են մեր կացութիւնը:
Մեզ՝ հայերու համար՝ բարբարոսներու կողմէ ծեծ-
ուել, վերաւորուել, սպանուել սովորական բաներ դար-
ցած են. «պապհովութիւնը» իր նշանակութիւնն իս-
պառ կորուսած է. նա լոկ բառ մ'է մեզ համար, ու-
րիշ ոչինչ... Նորանոր կոտորածներու ահն ու սար-
սափը միշտ կը տիրէ ժողովրդի վրայ, նա չունի հան-
գիստ ոչ ցերեկ և ոչ գիշեր. թուրք խուժանի և նոյն
խիկ կանոնաւոր կոչուած զօրքերու և պաշտօնեաներու
բերաններէն միշտ լսելի են հետեւեալ խորհրդաւոր և
սոսկալի խօսքերը «կեաւաւորար, սիգ տէօվլէթ վէ մի-
լէթմըզի մուսաթէրէէ պըրագալընըղըզի. իւշին Սուլ-
թանըմըլ Մօսգօֆ իլէ մօհէրէպէ էտէճէք... պիղ-

տէն էսքէր իստիւօր, պիղտէ սիզի պիւթիւն պիւթին
մուսթ էտուպ էյլէ կիտէճէղը էօյլէ պիլմիշ օլըն».
«կապուրներ դուք մեր ազգութիւնը և պետութիւնը վը-
տանդի ենթարկեցիք, ձեզ համար մեր Սուլթանը Ռու-
սիոյ հետ պիտի պատերազմի... և մեզնէ զօրք կը պա-
հանջէ, մենք ալ ձեզ բոլորովին բնաջինջ պիտի ընենք
և այնպէս գնանք... այսպէս գիտցած եղիք»: Գիւրին է
երեւակայել թէ այս խօսքերը ինչ աստիճանի ահ ու
սարսափ կը ձգէ ժողովրդի վրայ, այն ժողովրդի վրայ՝
որը բոլորովին զուրկ է անձնապաշտպանութեան համար
որ և է զէնքէ նոյն իսկ միս կտրելու դանակէ մը...:

Այնչեքա Չէյթուցինները սկսած էին բաւական
մեծ թուով Մարաշ գալ և գնալ ցորեն, աղ և այլն
գնելու համար. այս առթիւ տեղացի թուրք խուժա-
նը կատաղելով սկսաւ բացարձակապէս զինուել հայե-
րը կոտորելու համար առաջարկելով թէ ո՞րը հա-
րիւրաւոր Չէյթուցիններ կուգան և անոնցմէ միայն
10-15 ը կը գնան, մնացեալները հոս կը պահուին որ
օր մը տեղացի հայերու հետ միանալով մեր վրայ
յարձակին և կոտորեն մեզ. ուստի մենք ալ այժմէն
կոտորենք զիրենք»:

Մարաշ գտնւող Փռանսական հիւպատոսը ահա-
նատես լինելով թուրք խուժանի այս պատրաստութեան
և կառավարութեան ալ անտարբերութեան, տեղոյս
Սուլթանարըֆին դիմեց խիստ յանդիմանութիւններ
ընելով և պահաճելով որ խուժանն անմիջապէս
ցրուէ: Սուլթանարըֆը արգէն ինք, իր վարե-
նի պաշտօնեաներու միջոցաւ գրգռած լինելով
խուժանը, կը պատասխանէ «Նորա (հայերն) ալ
հանգարտ չեն մնար, ահա հարիւրաւոր Չէյթուցի-
ներ բերած և կը պահեն իրենց քով քաղաքը ֆէ-
սատի տալու համար»: Հիւպատոսը անմիջապէս հեռա-
գրեց Պոլիս, և՛ Սուլթանարըֆը միայն այն ատեն ըս-
կաւ ցրուել կատաղած խուժանը՝ երբ Պոլիսէն իրեն
սաստիկ հրաման եկաւ. այս անգամ Սուլթանարըֆը
ինք կատաղած սկսաւ հարիւրաւոր զօրքերով և պաշը
պօզուրներով խուզարկել տալ հայերու տուները. և,
Չէյթուցիներ փնտռել բայց իզուր: Եւ, ահա այս
դէպքէ վերջ Չէյթուցիներուն, Ալապազցիներուն և
Ֆռնուզցիներուն արգիլուեցաւ Մարաշ գալ, որոնք
չէին կարող ուրիշ կողմ գնալ և անօթի չը մեռնելու
համար, հաց և հատիկ, աղ և այլն գնելու համար
Մարաշ կ'ուգային:

Թուրք խուժանի մէջ այս օրեր աւելի ընդհան-
րացած է այս խօսքերը, թէ «թուրք պետութիւնը
պատերազմ պիտի ունենայ Եւրոպայի հետ... թէ կրէ-
տէն ապստամբած է... թէ Յոնները գրաւած են Վրէ-
տէն... թէ պայրախի շէրիֆը պիտի քաշենք և
կեաւուրները կոտորելէ վերջ՝ տինի պիւր ուղու-
ր ընալ պատերազմի պիտի գնանք...» կըսուի նաև թէ
պայրամի երրորդ օրը ըէտիֆները, Մուստաֆա-
ֆըզները, էհթիաթները և այլն պիտի սկսուի
գումարուել...: Այս առթիւ շուկաներու մէջ, մեծ
քանակութեամբ վառօթ, կապար և այլն կը ծախուի
թուրք խուժանին յայտնի կերպով: Ընդհանուր կոտո-
րածի մը ահը կրկին տիրելով հայ ժողովրդի սրտին
մէջ սկսան գաղթել:

Ահա այս է մեր վիճակը, և, դեռ մեր սրբազան
Օրմանեանը (անտառեանը) թող խաբէ թէ Եւրոպան
և թէ իր սիրեցեալ հօտը, թէ բարենորոգումներու
ծրագիրը ընդունուեցաւ, թէ պիտի գործադրուի. ամօթ

հազար ամօթ և անէծք այդ փառամուլ և ազգադաւ
վեղարաւոր սատանաներուն և, այն վատերու որոնք
կուրացած շահախնդրական միտումներով և անձնական
կրքերով իրենց դատապարտելի ընթացքով գործակից
կը հանդիսանան պաշը բողոք կառավարութեան, վայ-
րենի սուլթանին:

ԳՐԵՄ.

ՆԱՄԱԿ ԽԱՐԲԵՐԴԻՑ

Խարբերդ. 30 Նոյեմբեր, 1896.

Այս պահուստ տեղատարափէն թըրջուած հաւերու
երևոյթն ունինք մեր աւերակ բոյներու մէջ՝ գլուխնիս
ամփոփած ու սքսած թեւերով. և մտիկ կը տանք մեր
թառէն հեռաւոր աշխարհի մէջ անցնող պոռոտալից
կատակերգութիւններուն, որոնցմէ ոչ մի բան. չենք
հասկանար և որ կուգան ու կանցնին քամու սոյլի
նման ապարդիւն ու անիմաստ:

Ձիւնով ու բուքով խառն ձմեռայ առաջին օրե-
րու մէջ, կեանքն աւելի անհանդուրժելի և կացութիւնն
աւելի դառն կը դառնայ այստեղ: Տնտեսական հա-
շիւները այժմ կըստիպէին խորհել տալ կանգուն մնա-
ցած վերջին մի քանի հարուստներուն ալ: Առեւտրի,
շուկայի ասպարէզի վրայ վարկը կամ ապուրկը իս-
պառ վերցուած կը մնայ. իսկ կառավարութիւնը քաղ-
ցած գայլի սուր ժանիքներ և վագրի ճիրաններ կը
նետէ հասարակութեան կրծքին: Հայկական չէն գիւ-
ղերու վիճակը իսկապէս մորմորիչ է. կենդանի կեանք
չոգեւորեր այդ տուններն, ուրկէ մահն է անցած, կրակն
է անցած և հիմա ալ զրկանքն ու անթոճութիւնը կը
թագաւորեն անյուր տառապանքներով: Թափափա-
րը ներս կը մտնէ դռնէն. լպիրշ աչքերով, խուզար-
կու, տգեղ նայուածքներ կը պտտցնէ տան չորս կողմը,
ակնարկը կանգ կառնէ հարսի գէմքի վրայ. նա կը
պահանջէ դրամ տուրքերի համար: Այրին աղի ար-
տաւորներով իր էրկանը, զաւակներու, կտրիճներու
մահը կը լայ և կը ցուցնէ անոր մի ձեռք կապերտը,
որը ընտանիքի անկողինն է, մահիճն է, տանը զարդն
ու կահ կարասին է, որու վրայ թուրքի շունն իսկ
չը նստիր այժմ. և բացի այդ, ինչպէս վճարում ա-
նէր մեռածներու պարտքի, համար որոնք չը կան և գե-
րեզմաններն ալ անյայտ կը մնան: — «Հաւատա՛, փառի-
շահին գլխուն, ամբողջ ձմրան համար մէկ-երկու էօլ-
չէք Փաստեա. մի քանի չարէկ ոսպ ունինք, որոնց-
մով անցնելու ենք ահագին ձմեռը. ուսկէ՞ և ինչպէ՞ս
վճարում տանք, տաս փարայի երեսն իսկ սե-
սած չենք...» — «Տուէ՛ք, չեմ ճանչնար...» — «Չա-
ւակիդ արեւուն, Աստուծո՛ւ խաթեր համար, ինչպէս
տանք...» — «Է՛, մէջերնիս կը կարգադրենք...»: Եւ
վաւաշտ զապթիան ինչեր չի աներ, երբ արդա-
րութիւն ու օրէնքը իր սուրի ծայրն է, երբ խիստ
հեշտ է կնոջ մազէն բռնել և զգեստել իր առջին...
Ա՛հ, մի անգամ՝ քաղաքակիրթ կոչուած, փափկաւորտ
պատուականիդ ձէն թըլմէները մի անգամ գալով մեր
գիւղերէն անցնէին և մեր գեղջկական յարկերէն ներս
ծռելով գիտէին, ակնատես լինէին հայ կնոջ վշտե-
րուն, բռնաբարութիւններուն, անթիւ, անհամար գա-
ղանային արարքներուն: Դահլիճներու մէջ չափող-ձե-
ւող այդ քաղաքադէտ մարդասէրները մի անգամ տես-
նէին սուլթանական բաթեկարգութիւններ եղած-

և լինելիք երկրի մը պաշտօնեաները, պահապան զին-
ւորներն ու ոստիկանները, որոնք բարձրագոյն հրամա-
նով տուններ կը քանդեն՝ ատաղձը ծախելով վեր-
կին գոցելու համար և ընտանիքը, մանր ու խոշոր,
ձիւնի վրայ կը թողուն: Նոյն իսկ քաղաքին մէջ դըռ-
ները կոտրելով դուրս թափեցին, ինչ որ գտան տան մէջ
և, առանց մտիկ տալու ուշաթափուած հոյ աղջիկներու,
կիներու, մանկտիներու լացին ու պաղատանքին, մար-
թիւներով և սուղներով ծեծեցին ու կտոր կտոր արին:

Թուէս մի քանի օր առաջ, ս. Յակոբի թաղի մէջ,
երկու զինուորներ յարձակեցան ճաբալեան Ալէքսանի
վրայ, երբ սա փողոցէն կանցնէր իր քղանցքի ներքեւ
բռնած մի տոպրակ մէծիտիյէ փոխանակագրի վերածե-
լու համար: Սուրիները կը մերկանան և հարուածները
կակսին տեղալ. հայը կը դիմադրէ, կը պոռայ, սա-
կայն սուլթանի աւագակ զինուորները չեն վհատուիր,
և աւելի կուժեղացնեն իրենց յարձակումը: Զինուորի
մէկի մատը հրացանի ձգանին կը մօտենայ և գնդակը
կը ձգուի հեռուն: Հայը այլ ևս կը թուլանայ և զին-
ւորները տոպրակը առած թրքական թաղը կը մտնեն:
Կողոպտած քառասուն ոսկի էր, զինուորի քառասուն
տարւայ ծառայութեան գնէն իսկ աւելի: Հայը բո-
ղոքեց կառավարութեան, որու պատասխանը եղաւ, թէ
այդ արարքնակ գէպք է... հայը սուտ է... իսկ վեր-
ջին պատասխանը եղաւ, թէ տաճիկ վկայ ունէ՛ք: Յե-
տոյ իմացանք որ այդ երկու ըմբիշները Խոզաթի զօ-
րանոցէն են և այստեղ, վիլայէթի փողոցներու մէջ,
արձակ-համարձակ կը կողոպտեն, մինչդեռ կառավա-
րութիւնը անկարող կղզայ իրեն անոնց մօտենալու և
ձերբակալելու: Այս օրինակ գէպքեր բազմաթիւ են
քաղաքիս մէջ, կառավարութեան աչքի առջև, իսկ գիւ-
ղերու դրութիւնը, հայ գիւղացիներու կրած չարա-
ւանքներն ու հարստահարութիւնները՝ անկարագրելի են

Այս օրերի Կ. Պօլսի կեդրոնական կառավարութե-
ան, Խարբերդի կուսակալութեան հասած է սուլթա-
նական մի իրաւ է, որով կը հրամայէ հանգանակել,
մօտաւորապէս, 50,000 ոսկի, ի յան էի ձէպրի է ա-
նունով: Այս լուրէն յետոյ թուրք մեծաւորները, մօլ-
լանները ևն. խուժը-խուժը կը հաւաքուին ճամիւներու
շուրջը, հիւճիւրէներու խցիկներու մէջ և կակսին մտա-
ծել, իբր, թիւրքիայի և սուլթանի կառավարութեան
այս քայլայված, ապականուած վիճակի վրայ... Տա-
րածայնութիւնը այնպէս է, թէ հայ հասարակութեանէն
բռնի ոչինչ չը պիտի պահանջուի այդ հանգանակու-
թեան համար (թէ և խնդիրը միայն բռնի բառի սահ-
մանի և անոր գործադրութեան մէջ չէ ի հարկէ),
սակայն իսլամը պէտք է անպատճառ վճարէ: Զարմա-
նալի է տեսնել թէ, ինչպէս գործադրութիւն պիտի
ունենայ իսլամ ժողովրդի կողմէ՝ սուլթանական այդ
տարօրինակ ցանկութիւններն ու թղթի վրայ գրուած
հրամանները: Այսօր թրքական բարձր պաշտօնեաներէն
սկսած՝ մինչև ամենապարզ զինուորը, ոստիկանը, տգէտ
մոլեռանդ թուրք խուժանը, մլխին ու քիւրտը ամե-
նազգուելի հայհոյանքներով, նախաախններով ու ա-
նէծքով կը տան իրենց խալիֆայ-փատիշահի անունը.
անսնց համար արդէն ոչինչ կարեւորութիւն չունեն այլ
ևս կառավարութիւն, կարգ ու կանոն, օրէնք բառերը:
Չը գիտենք թէ ինչպէս և ո՞ր տեղէն պիտի հանգա-
նակեն այդ ահագին գումարը, որի ամենափոքր մասն
իսկ լրացնելու չի բաւականանար ամբողջ նահանգիս
հասարակութեան քսակի հնչեւն դրամը: Իրականու-

Թիւն է: որ այդ իրատեները արձակողը և կամ այդ ցուցակը կարգադրողը Թիւրքիայի ժողովրդի տնտեսական կացութիւնը կամ անոր վիճակացոյցը աչքի առնելու նկատմամբ չէ, այլ քաղաքական տագնապները և ներկայ ծանր, օրհասական ճգնաժամը: Սարսափներէն կողոպտաններէն առաջ կամ առանց ասոնց՝ սուլթանը չէր կարող այդպիսի պահանջներ անել իսլամներէն. . . Իսկ հայերս այժմ մեր քար ու քանդ եղած բնակարաններէն և միայն աւերակներէն նոր նոր յոյսերով ու երազներով կը դիտենք դէպի ապագան, մօտիկ ապագան...

ՃԻՒՆՆԻ.

ՆԱՄԱԿ ԱՐԱՐԱՅԻՑ

20 փետր. 97

ՄԵՐ ՎԻՃԱԿԸ ՄԵՐ ԿՈՏՈՐԱՆԵՐՆ ԻՎԵՐ. — ԱԿՆԱՅ ԶԱՐԴ. — ԱՐԶԱԿՈՒՄ ՀԱՅ ԲԱՆՏԱՐԱԿԵՒՈՑ. — ԽՈՍՏԱՅՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ. — ԱՐՔՈՒՆԻ ՏՐՈՑ ՀԱՆՈՒՔՈՒՄ ԵՒ ԿԱՅՍ. ՆՊԱՍՏ. — ԹԱՂԱՅԻՆ ԳԻՇԵՐԱՊԱՀՆԵՐ:

Այն զարհուրելի նախճիրներէն վերջ, որու աղետարշ նկարագրութիւնը կ'արդացուեցաւ «Հնչակի» նախորդ տարւոյ թիւերուն մէջ, աղետաշուք հոգեմբէրէն ի վեր քաղաքնուս մէջ. ինչպէս թերեւս ամեն տեղ՝ սրտաւառ միօրինակութիւն մը կը տիրէ: Միշտ երկիւղ ու անվստահութիւն, նախատինք ու հալածանք, կեղեքում ու նեղութիւն և սարսափ...

Ղորանի պաքշտ վարդապետին երկրային այս վերջին փոխանորդը երբեք այնքան իսկապէս ճանջուած էր 1895-ին, նոյնպէս տաճկութիւնը՝ մէկ առած կառավարութիւն, զօրականութիւն, ցեղապետութիւն ու հասարակութիւն ոչ ուրեք իւր գիւղային կատաղութեան մեծ ապացոյցը տուած էր որքան Արաբկիր... Անթիւ ու սրտաշարժ աւերակներու վրայ՝ կարծես Արտիւլ-Համիտի ուրուականը կը վազվառէ գոհ ու գոխային քրքիջով, և հազարաւոր որբերու, սգաւորներու, տառապանքներու գլխու վրայ տաճկութեան խաւարակուռ ջղջկը կը սուլէ՝ միշտ ահարկու, սպառնալից, արհաւիրագին... Սուլթանը իր եէնիչէրիական բանակով դենպետը իր մոլեգին ու անկիրթ հաւատացեալներու լէգէոններով — բոլորն ալ նուիրական զինուորներ ուղղափառ կրօնին. Ստանքադ Շէրիֆին կանաչաթոյր ծածանումին տակ ահաբեկ, աշխարհազանդ վայրկեան, ուր ամեն օրինաւոր ամուսնութիւններ չեղեալ կամ լուծուած պիտի համարուին, ուր կինը իր ամուսնոյն դէմնէմ հրէմ (քողածածուկ) պիտի ըլլայ եղբր:

Ճամի ու Պապ-Ալի վերջապէս՝ երկու գարշալից ու գիակեր Մողղներն՝ ոյք թե թեկի միջին շաղապատումով մը իրար են գրկած հիւ առասպելական բազմազուն գիտունները, Մղձաւանջի հիգրաները ներկայացնելով, որու ամրապնդ ընդերուզման մէջ հայութիւնը կը ճնշուի, կը ճմլուի ու կը հեծեծէ այնքան աղիողորմ, սրտաճմլիկ, որքան անզգայ են հեգնոտ Էւրօպական Տէրութիւնները. նա տկար ու անպաշտպան այնքան՝ որքան իր շահասէր կրօնակիցները հօգր, մեծագոր... Ահա անճողոպրելի գեհեանը՝ որու մատուած ենք, մանաւանդ այս վերջին տառն և հինգ ամիսներէ ի վեր, անտանելի վիճակ, մեր դէմ թշնամի ունենք ոչ՝ միայն օսմ. կայսրութիւնը՝ այլ Տաճիկ ժողովուրդը, միւսլիման կրօնն ալ, խօժան ալ, տէրվիշն ալ, քիւրտն

ալ, եղուզակն ալ: Այս խաժամութիւն հանդէպ բիրտ ու պակուցիչ հարուածներ պէտք են, որ մոլեռանգութեան հսկայ խրդուկակին հիմքերը սասանին...

Եւրօ գաղանի մը ժանիքը արեան մէջ թաթախի, այլևս յագուրդ չունենար, ախորժը կը սրէ, կուզէ յուշտել այնքան երկար, որքան զԻճ ունի յագեղիք իր առջև, ինչ տաբերութիւն, այս երկոտանի և միւս չորրորտանի գաղաններու մէջտեղ: արիւնով շաղարուած ճիւղը՝ որու ժանիքը կրօնի զգլխիչ ներշնչմանէն կը կախկափէ, և մագիլը պետական գրգռումներէն կը խտխտի... Չանցնիր շաբաթ մը և նոյն իսկ պիտի ըսեմ օր մը, որ նորագոյն կոտորածի մը հրէշային մըրմուռնը չունենան, որ կարտայայտեն առաւել կամ նուազ գաժան ցոյցերով:

(Կը շարունակվի).

ԳԼԵԴԱՏՈՒՆԻ ԲՐՈՅԻՐԸ.

Մարտ ամսի 18-ին Հոնդոնում լոյս տեսաւ, քրօշիւրի ձեւով, Գլեդատունի մի նամակը, որ նա ուղղել է Ուէստմինստըր դուքսին: Թէեւ միայն հանգիստ առնելու փափագ ունենալով, Մեծ Ժեյմսը յայտնում է, որ մօտ կէս դար մասնակցած լինելով Արեւելեան խնդրում, նա չէ կարող լուծիւն պահել: Գլեդատունը նախ խօսում է հայկական կոտորածների մասին սկզբից մինչև վերջ: Նա խիստ յարձակվում է եւրօպական տէրութիւնների բռնած ընթացքի վրայ: Նա յիշեցնում է, որ ինքը փորձեց եւրօպական մի համաձայնութիւն կայացնել եւ որ շուտով հասկացաւ թէ պետութիւններից ոմանք այդ համաձայնութիւնը հասկանում են ոչ այնպէս, ինչպէս Անգլիան եւ որ նրանք զբաղւում, այդ համաձայնութեամբ, գլխաւորաբար առիթ էին որոնում անիմա տոցոյցեր անելու, զգուշանալով սակայն նոյն այդ ցոյցերն իրագործելու: Պետութիւնների միացման զգացումը միանման չէ: Վատն այն է, որ տէրութիւնները յաւակնութիւն ունեն, մէկ անօգուտ համագործակցութեամբ, բոլորովին անուշադիր մտաւ դէպի իրանց ժողովրդների զգացումները: Ահա վստաք: Հասել է ժամանակն ազատ խօսելու:

Երկու երիտասարդ միապետներ ներկայումս կառավարում են մեծ ազգեր. զբանցից մէկն անփորձ է, իսկ միւսն այնչափ սամանափակ փորձառութիւն ունի, որ զրա ամեն-մէկ արտայայտութիւնն երկիւղ է պատճառում ու ապշեցնում: Ելլ երկու կայսրներն էլ եւրօպական համաձայնութեան ազդեցութիւնը գործածում են ընդդէմ ազատութեան. այդ համաձայնութիւնը մեծ դանդաղութեամբ աշխատեց երկու տարի եւ վիճակը փոխարէն քարելաւելու, աւելի վտանգաւոր դարձեց: Արդ, ինչո՞ւ համար Անգլիան մասնակից լինի այդպիսի համաձայնութեան: Հասել է ժամանակը նրան փրկելու Կրէտէի ինքնավարութեան մղոճաւանջից: Կրէտէն պէտք է միացվէ Յունաստանին ինչպէս Բոսնիա ու Հերցեգովինան Աւստրիային է միացված: Գլեդատունը գովում է Կրէտէին, որի ընթացքը պարտաւորեցնում է Եւրօպային մի վերջնական լուծում տալու կրէտական հարցին: Կրէտէն այդպիսով մի մեծ ծառայութիւն կը մատուցանէ:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ԿՐԵՏԷ ԵՐՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

— Մարտ 10. Եւրօպական Դատարի դէմ տրուած՝ Յունաստանի պատասխանը, գեոեւ վիճաբանութեան տակ ե Եւրօպական Կարինէտներում: Ռուսիա և Գերմանիա, անբաւական այդ պատասխանից, առաջարկում են անմիջապէս պաշարել Յունական ու Կրէտական նաւահանգիստները, իսկ Կանէայում կոիւր շարունակվում է, Սիտիայի շրջապատում տեղի ունեցած ջարդը ստուգվեց, 400 Մահմետականներ կան մեռած: Ծովակալներ Տրամանաւ Կանէայից հեռացան բոլոր Յոյն հպատակները և Յունաստանի Հիւպատոսը:

— Մարտ 12. Թիւրք կառավարութիւնը շարունակում է ամրացնել Յունական սահմանագլուխը, հրամաններ տուած է միանգամայն Մակեդոնիոյ և քաս-

տանգրայի տեղական իշխանութիւններին, պատերազմական պէտքերի համար գրաւել բոլոր ֆրիստոնեաների ձիերը, ջորիները, և այժմէն իսկ ստիպողաբար հաւաքել յառաջիկայ տարուան տուրքերը: Հասկանալի է թէ այս կարգադրութիւնները որչափ զգոհութիւն յառաջ բերած են բնիկ ֆրիստոնեաների մէջ: Երէկ 11 Մարտ Աթէնք հասան 50 ֆրանսացի կամաւորներ, իտալացի հանրածանօթ ընկերվարական Ամիլբար 2իպրիանիի առաջնորդութեամբ:

— Մարտ 13. Ֆրանսական մի թերթի թղթակիցը, որ տեսել է սահմանագլխի թէ՛ Յոյն և թէ՛ թուրք բանակները առում է թէ Էլաստոնայում, որը թիւրք բանակի կեդրոնավայրն է, 18,000 զինւորներ կան այժմ, որոնց ամենն սակայն, բացարձակապէս զուրկ են ամեն պիւսոյքներից, ոչ զգեստ ունեն իրանց վրայ և ոչ կոշիկ ոտքերին, իսկ պատերազմական ոգին այնչափ տրկաբացած է իրանց մէջ որ ամեն օր բազմաթիւ դասալիքներ անհետանում են բանակից: Ընդհակառակն ասում է թղթակիցը, Յոյն բանակը ծայրայեղ ոգևորութեամբ վառուած է, և հազիւ թէ զօրապետները յաջողում են հանդարտ պահել նրանց որ ժամանակից առաջ անխորհուրդ յարձակումներ տեղի չունենան թշնամիի վրայ: Զինւորների պէտքերին կատարեալ գոհացում տրուած է. միայն ապստամբներ լինելով 15,000 մարդ հաւաքուած է սահմանի վրայ, իսկ կանոնաւոր զօրքը 25,000 հոգի է հաշուում Լարիսսայում և Միլիալայում, որոց թիւը մի քանի օրից պիտի բարձրանայ մինչև 80,000 հոգու: Երէկ 16 Մարտ. Վալոյէն և Լարիսսայէն ապստամբներու երկու խումբեր մղտան Մակեդոնեա, մին 1,000, միւսը 300 հոգիէ բաղկացեալ: Իւսքիւպի մէջ, երբ Սերպիական և Ալբստրիական հիւպատոսները սրճարանի մը մէջ նստած են եղեր, յանկարծ մի թուրք դաշոյն ի ձեռին վերանին կը յարձակի ներկաները դէպքի առջևը կառնեն:

— Մարտ 19. Ծովակալները յայտարարութիւն մը հանեցին ծանուցանող, որ վաղը Հաբաթ պիտի սկսի Կրէտէի պաշարումը: Աւստրիական Սէբէնիքօ զորահաւորը Կանէայի մօտերը ընկղմեց մի Յունական նաւ, որ ռազմավթերը և ուտեստ կը տանէր կղզին: Պէյրութի Վալի ընտրուած է, նախկին Ոստիկանապետ Դազմ փաշան, այս ընտրութիւնը կարծել կուտայ ընդհանրապէս որ Պալատը իւր ջարդերու քաղաքականութիւնէն շեղելու ամենեւին միտք չունի: Դամասկոսէն Մարտ 8-ին ծամբայ ելած է Մէքքէի ուխտագնացների սովորական կարաւանը: Վերջի վայրկենին միայն Օսմանեան բանքան համաձայնած է վճարել կարաւանի ծախքերի համար 60,000 ոսկի: Այս առթիւ լուր կը տրուի Դամասկոսից, որ տեղական թուրք բանակի վիճակը աննկարագրելի կերպով վատ է, նոյն իսկ զօրականները, որոնք ինն ամիսներէ ի վեր ամսավճար չեն ստացած, ըստիպուած են ուտեստի համար վաճառել թէ գէնքերին և թէ համազգեստին:

— Մարտ 20. Երէկ գիշեր Աթէնքից դէպի Վալո և սահմանագլուխը ծամբայ ելան գահաժառանգի բանակից երկու գումարտակ, վայրկեանէ վարկեան կսպասուի, որ գահաժառանգն ալ ծամբայ ելնէ: Յունաստան համաձայնեցաւ կրէտական ջոկերից իւր մարտանաւերը յետ կանչել: Կրէտէի պաշարումը սկսան այսօր: Եգիպտոսի մահմետականները ի նպաստ Տաճկաստանի ժողովարարութիւն կընեն, մինչ այժմ հա-

ւաքած են 15,000 եգիպ. ոսկի:

Աթէնքից տրուած լուրի մը համաձայն գաղտնի դաշինք կայ եղեր Ռուսիոյ և Տաճկաստանի միջև, որով առաջինը թուրքիոյ ամբողջութիւնը կերաշխաւորէ եղեր և ի փոխարէն պիտի ստանայ կղզի մը միջերկրականի մէջ իւր հանքածուխի կայան և Աթոս լեռան թերակղզին:

— Մարտ 24. Ծովակալները յայտարարութիւն մը հանած են հրաւիրելով ապստամբներին այլևս յարձակումներ չըզործել թրքական բերդերի վրայ: Յունաստանի պաշարման հարցը տատանման մէջ է. Անգղիա և Ֆրանսա ձգձգում են այդ հարցը:

— Մարտ 26 և 27. Ապստամբները, որ Կանէայի մօտերը բերդ մը գրաւելու վրայ էին, վերստին ռմբակոծուեցան եւրօպական մարտանաւերից. մինչդեռ թուրք նաւ մը Սամիհ բաշայի առաջնորդութեամբ ռազմավթերը և զօրք կը հանէ Կրէտէ:

— Մարտ 29. Ամսիս 18-ին մեծ ջարդ է եղել թուրքաւորի մէջ 500 զոհ տուած է և քաղաքի աւարը ութ ժամ տեւած է:

— Կրէտացիք այժմ Իզդէտոն բերդին վրայ յարձակելու կը պատրաստուին, իսկ Կանէայի շուրջը գլուխը բոլոր ռազմագիտական զիւրքերը արդէն իրենց ձեռքն ինկած է: Եւրօպական պետութիւնները վերջնագիր մը կը պատրաստեն Յունաստանին մատուցանելի, պահանջելով որ իւր բանակները յետ քաշէ Կրէտէից, հակառակ պարագային պիտի պաշարեն Վալոյի նաւահանգիստը: Վերջերս Լօրտ Սալըզպլըի տեսակցութիւն մը ունեցաւ Ֆրանսական Արտաքին գործոց նախարարի հետ, արդ այսօր Պարիզի Խալաֆան դեսպանի իւր կառավարութեան տուած մէկ հեռագիրն ասում է, որ այդ երեք պետութեանց մէջ մերձեցում կայ այն պատահականութեան հանդէպ, երբ Ռուս Կառավարութիւնը յանկարծական քայլեր առնէ Արեւելքում և մասնաւորապէս Դարդանէլում:

ՀՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՄՆԷ

Ժ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԱՆԵԼԻՍԺ՝ ԲԱՅԱՐԱԿԱՆ ԹՕՐՈՒՄԾՆԵՐ.

«Ա Պ Տ Ա Կ»

ԵՐԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

(ՄԻԱՄՍԵԱՅ)

Լոյս տեսաւ «Ապտակի» երրորդ տարեշրջանի թիւ 11. Մարտ ամսի համարը: Նկար. — Պատմական մնամարտ:

Բովանդակութիւն. — Սուլթանի ուրախութիւնը. — Հանդէս փառաբանութեան. — Դէս ու դէս. — Քաղաքականութիւն. — «Ապտակի» հանելուկներ. րէպուս թիւ 12. — Թիւ 11. րէպուսի լուծումը:

«Ապտակի» տարեկան բաժանորդագրին է 5 ֆրանկ: Առաջիկայ Մայիս ամսին «Ապտակը» մտնում է իր գոյութեան շրջորդ տարեշրջանը: Բաժանորդ զրկել ցանկացողներին խնդրում ենք առանց ուշացնելու դիմել «Ապտակի» խմբագրութեան:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀՆԱԿ»-Ի

ԼՕՆԴՕՆ.